

**Էլեկտրամատակարարման և ենթակառուցվածքներում ներդրումների անվտանգության
ապահովմանն ուղղված միջոցներին վերաբերող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի
2006 թվականի հունվարի 18-ի 2005/89/ԵՀ հրահանգ**

Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ

Պաշտոնական տեղեկագիր L 033, 04.02.2006 թ., էջ 0022-0027

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին
համապատասխան [2],

Քանի որ

1) «Էլեկտրաէներգիայի ներքին շուկայում ընդհանուր կանոնների վերաբերյալ» Եվրոպական
պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26-ի 2003/54/ԵՀ հրահանգով շատ
կարևոր ներդրում կատարվեց էլեկտրականության ներքին շուկայի ստեղծմանն ուղղությամբ:
Էլեկտրամատակարարման անվտանգության բարձր մակարդակի երաշխավորումը ներքին
շուկայի բարեհաջող գործունեության համար առանցքային նպատակ է, և այդ հրահանգով
անդամ պետություններին հնարավորություն է տրվում էլեկտրականությանն առնչվող
ընկերությունների վրա դնել հանրային սպասարկման պարտավորություններ, այդ թվում՝
մատակարարման անվտանգությանն առնչվող պարտավորություններ: Հանրային
սպասարկման այդ պարտավորությունները պետք է սահմանվեն հնարավորինս հստակ և
ճշգրիտ, և չպետք է պատճառ դառնան արտադրական կարողությունների ստեղծմանը,
որոնք անցնում են վերջնական սպառողին էլեկտրականության բաշխման անհարկի
կասեցումը կանխելու համար անհրաժեշտ կարողությունների սահմանը,

2) Էլեկտրականության պահանջարկը սովորաբար կանխատեսվում է միջանկյալ ժամկետներից ավելի ժամանակահատվածում փոխադրման համակարգի օպերատորների կողմից մշակված սցենարների հիման վրա կամ այլ կազմակերպությունների կողմից, որոնք ունակ են դրանք կազմել անդամ պետության պահանջով,

3) ԵՄ Էլեկտրականության ընդհանուր մրցակցային շուկան պահանջում է էլեկտրամատակարարման անվտանգության ապահովման թափանցիկ և ոչ խտրական քաղաքականություն, որը համահունչ է նմանատիպ շուկայի պահանջների հետ: Առանձին անդամ պետություններում այսպիսի քաղաքականության բացակայությունը կամ անդամ պետությունների քաղաքականությունների միջև էական տարբերությունները կարող են հանգեցնել մրցակցության խաթարումների,

Հետևաբար, իրավասու մարմինների, ինչպես նաև հենց իրենց անդամ պետությունների և շուկայի բոլոր համապատասխան մասնակիցների դերի և պարտականությունների որոշումը կարևոր է էլեկտրամատակարարման անվտանգությունը և ներքին շուկայի պատշաճ գործունեությունը երաշխավորելու համար, և միևնույն ժամանակ խոչընդոտների առաջացումից խուսափելու համար շուկա մուտք գործողների նկատմամբ՝ ինչպիսիք են օրինակ անդամ պետությունում էլեկտրականություն արտադրող և մատակարարող ընկերությունները, որոնք վերջերս են սկսել իրենց գործունեությունը այդ անդամ պետությունում, ինչպես նաև խուսափելու համար ներքին շուկայում էլեկտրականության խաթարումներից կամ շուկայի մասնակիցների համար էական դժվարությունների առաջացումից, ներառյալ փոքր շուկայական մասնաբաժին ունեցող ընկերությունների՝ ինչպես օրինակ համապատասխան Համայնքի շուկայում շատ փոքր մասնաբաժին ունեցող արտադրողների ու մատակարարների համար առաջացող դժվարությունները,

4) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1229/2003/ԵՀ որոշմամբ սահմանվում են անդրեվրոպական էներգացանցերին ուղղված Համայնքի քաղաքականության մասին մի շարք ուղեցույցներ: «Էլեկտրականության փոխանակման միջսահմանային ցանցին միանալու պայմանների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունիսի 26–ի թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգով [5] սահմանվում են մասնավորապես գերբեռնվածության կառավարմանը վերաբերող ընդհանուր սկզբունքներն ու մանրամասնորեն նկարագրված կանոնները,

5) Վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրականության խթանման ժամանակ, անհրաժեշտ է ապահովել դրան հարակից պահուստային կարողությունների

առկայությունը, որպեսզի տեխնիկապես անհրաժեշտ դեպքերում պահպանվի ցանցի ապահովությունն ու անվտանգությունը,

6) Համայնքի բնապահպանական պարտականությունները կատարելու և ներկրվող էներգիայից դրա կախվածությունը նվազեցնելու համար, կարևոր է հաշվի առնել էլեկտրականության պահանջարկի աճման երկարատև ազդեցությունները,

7) Ցանցային անվտանգությանը վերաբերող հարցերի՝ ներառյալ հաղորդման կարողությունները, տեղեկատվության տրամադրումը և ցանցի մոդելավորումը որոշելու գծով հարցերի շուրջ ազգային փոխադրման համակարգի օպերատորների միջև համագործակցությունը չափազանց կարևոր է արդյունավետ գործունեություն իրականացնող ներքին շուկայի զարգացման համար և կարող է ավելի բարելավվել: Ցանցային անվտանգության մասով համակարգման բացակայությունը խոչընդոտում է մրցակցության համար հավասար պայմանների ստեղծմանը,

8) Համապատասխան տեխնիկական կանոնների և առաջարկությունների՝ ինչպես օրինակ էլեկտրական էներգիայի փոխանցման համակարգման միության (ԷՓՀՄ) գործառնական ձեռնարկում պարունակվող, Nordel, the Baltic Grid Code-ի կողմից մշակված կամ Միացյալ Թագավորության և իռլանդական համակարգերի համար նախատեսված նմանատիպ կանոնների ու առաջարկությունների գլխավոր նպատակն է աջակցել փոխկապակցված ցանցի տեխնիկական գործունեությանը, այսպիսով նպաստելով ցանցի անհրաժեշտ շարունակական գործունեության իրականացմանը ցանցի առանձին հատվածում կամ հատվածներում համակարգի խափանման ժամանակ, ինչպես նաև նվազագույնին հասցնելով այսպիսի մատակարարման խափանման դեպքերի կրճատմանը առնչվող ծախսերը,

9) Փոխադրման և բաշխման համակարգի օպերատորներից պետք է պահանջել ընդհատումների հաճախականության և տևողության առնչությամբ վերջնական սպառողին տրամադրել բարձր որակի ծառայություն,

10) Միջոցները, որոնք կարող են կիրառվել երաշխավորելու համար, որ արտադրության պահուստային կարողությունները օգտագործվում են, պետք է լինեն շուկայական և ոչ խտրական, և կարող են ներառել այնպիսի միջոցներ, ինչպիսին են պայմանագրային երաշխիքները և պայմանավորվածությունները, այլընտրանքային կարողությունները կամ այդ գծով պարտավորությունները: Այս միջոցները կարող են նաև լրացվել այլ ոչ խտրական գործիքներով, ինչպիսին են վճարամիջոցները,

11) Համապատասխան նախնական տեղեկատվության հասանելիությունն ապահովելու համար, անդամ պետությունները պետք է հրապարակեն այն միջոցները, որոնք ձեռնարկվում են արտադրության գծով ներկա և հնարավոր ներդրողների միջև և էլեկտրականության սպառողների միջև մատակարարման և պահանջարկի հավասարակշռությունը պահպանելու համար,

12) Չհակասելով համաձայնագրի 86, 87 և 88-րդ հոդվածներին՝ անդամ պետությունների համար կարևոր է սահմանել հստակ, պատշաճ և կայուն շրջանակ, որը կհեշտացնի էլեկտրամատակարարման անվտանգության ապահովումը և որը նպաստում է արտադրության կարողությունների և պահանջարկի կառավարման տեխնիկաների ոլորտում ներդրումների իրականացմանը: Կարևոր է նաև, որ համապատասխան միջոցներ ձեռնարկվեն ապահովելու համար կարգավորող շրջանակը, որը խրախուսում է հատկապես անդամ պետությունների միջև նոր փոխադրման միջհամակարգային փոխկապակցվածության ոլորտում ներդրումների իրականացմանը,

13) 2002 թվականի մարտի 15-ին և 16-ին Բարսելոնայում Եվրոպական խորհուրդը համաձայնության եկավ անդամ պետությունների միջև միջհամակարգային փոխկապակցվածության մակարդակի շուրջ: Փոխկապակցվածության ցածր մակարդակները հանգեցնում են շուկայի մասնատմանը և խոչընդոտ են հանդիսանում մրցակցության աճման համար: Համապատասխան ֆիզիկական փոխադրման միջհամակարգային փոխկապակցվածության կարողությունների առկայությունը, միջսահմանային կամ ոչ միջսահմանային, կարևոր բայց ոչ բավարար պայման է լիովին արդյունավետ մրցակցություն ապահովելու համար: Վերջնական սպառողի շահերից ելնելով՝ նոր փոխկապակցվածության գծով նախագծերի հնարավոր օգուտները և այդպիսի նախագծերի համար իրականացվող ծախսերը պետք է իրատեսորեն հավասարակշռվեն,

14) Մինչդեռ կարևոր է առանց ցանցի անվտանգ գործունեության պահանջները խախտելու որոշել փոխադրման առավելագույն հնարավոր կարողությունները, կարևոր է նաև երաշխավորել փոխադրման համակարգում կարողությունների հաշվարկի և հատկացման ընթացակարգի ամբողջական թափանցիկությունը: Այս եղանակով հնարավոր կլինի ավելի լավ օգտագործել առկա կարողությունները, և շուկային պակասի մասին սխալ ազդանշաններ չեն հաղորդվի, ինչը կօգնի 2003/54/ԵՀ հրահանգով նախատեսված լիովին մրցակցային ներքին շուկային հասնելու համար,

15) Փոխադրման և բաշխման համակարգի օպերատորներին անհրաժեշտ է պատշաճ և կայուն կարգավորող շրջանակ՝ ներդրումների, ինչպես նաև ցանցերի պահպանման և վերանորոգման համար,

16) 2003/54/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածով անդամ պետություններից պահանջվում է կազմել և ներկայացնել հաշվետվություն էլեկտրամատակարարման անվտանգության մասին: Այս հաշվետվությունը պետք է պարունակի կարճ, միջին և երկար ժամկետների համար գործոններ, որոնք համապատասխանում են մատակարարման անվտանգությանը ներառյալ փոխադրման համակարգի օպերատորների մտադրությունը միջոցներ ներդնել ցանցային ոլորտում: Այսպիսի հաշվետվություն կազմելու դեպքում անդամ պետություններից ակնկալվում է տրամադրել տեղեկատվություն և գնահատման վերլուծություններ, որոնք իրականացվել են Եվրոպական մակարդակով փոխադրման համակարգի օպերատորների կողմից թե անհատական և թե կոլեկտիվ հիմքերով,

17) Անդամ պետությունները ապահովում են սույն Հրահանգի արդյունավետ իրականացումը,

18) քանի որ նախատեսված գործողության նպատակները, այն է՝ բարելսիղճ մրցակցության վրա հիմնված անվտանգ էլեկտրամատակարարումն ու ամբողջական գործունեություն իրականացնող էլեկտրականության ներքին շուկայի ստեղծումը, չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, և առաջարկվող գործողության ծավալի և ազդեցության շնորհիվ կարող են ավելի լավ իրագործվել Համայնքի կողմից, ապա Համայնքն իրավասու է ակտեր ընդունել Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքներին համապատասխան: Համաչափության սկզբունքին համապատասխան, ինչպես սահմանված է այդ հոդվածով, սույն Հրահանգը չի սահմանազանցում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների շրջանակը,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգով սահմանվում են այն միջոցները, որոնք ուղղված են ապահովելու էլեկտրամատակարարման անվտանգությունը, որպեսզի երաշխավորվի էլեկտրականության ներքին շուկայի պատշաճ գործունեությունը, ինչպես նաև ապահովվի՝

ա) արտադրական կարողությունների պատշաճ մակարդակ,

բ) մատակարարման և պահանջարկի միջև համապատասխան հաշվեկշիռ

և

գ) ներքին շուկայի զարգացման հարցում անդամ պետությունների միջև փոխկապակցվածության պատշաճ մակարդակ:

2. Դրանով սահմանվում է այն շրջանակը, որի սահմաններում անդամ պետությունները պետք է մշակեն էլեկտրամատակարարման թափանցիկ, կայուն և ոչ խտրական քաղաքականություններ, որոնք համահունչ են էլեկտրականության ներքին մրցակցային շուկայի պահանջներին:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝ կիրառվում են 2003/54/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածում պարունակվող սահմանումները: Ի լրումն, կիրառվում են նաև հետևյալ սահմանումները.

ա) «կարգավորող մարմին» նշանակում է 2003/54/ԵՀ հրահանգի 23-րդ հոդվածին համապատասխան անդամ պետություններում նշանակված կարգավորող մարմինները,

բ) «էլեկտրամատակարարման անվտանգություն» նշանակում է էլեկտրական համակարգի՝ վերջնական սպառողին էլեկտրականություն մատակարարելու կարողությունը սույն Հրահանգով նախատեսված կարգով,

գ) «գործող ցանցային անվտանգություն» նշանակում է կանխատեսելի հանգամանքներում փոխադրման և համապատասխան դեպքերում բաշխման ցանցի շարունակական գործունեությունը,

դ) «մատակարարման և պահանջարկի միջև հաշվեկշիռ» նշանակում է սպառողների էլեկտրականության օգտագործման կանխատեսելի պահանջների բավարարում՝ առանց սպառումը նվազեցնելուն ուղղված միջոցների կիրառման անհրաժեշտության:

Հոդված 3

Ընդհանուր դրույթներ

1. Անդամ պետությունները ապահովում են էլեկտրամատակարարման անվտանգության բարձր մակարդակ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ կայուն ներդրումային պայմանների ստեղծմանը նպաստելու համար և որոշելով իրավասու մարմինների, ներառյալ համապատասխան դեպքերում կարգավորող մարմինների, և բոլոր համապատասխան շուկայի մասնակիցների և նրանց վերաբերյալ հրապարակվող տեղեկությունների դերը և պատասխանատվությունները: Համապատասխան շուկայի մասնակիցների մեջ են մտնում մասնավորապես փոխադրման և բաշխման համակարգի օպերատորները, էլեկտրականության արտադրողները, մատակարարները և վերջնական սպառողները:

2. 1-ին պարբերությունում նշված միջոցները կիրառելիս անդամ պետությունները հաշվի են առնում՝

ա) էլեկտրամատակարարման շարունակական բնույթը ապահովելու կարևորությունը,

բ) թափանցիկ և կայուն կարգավորող շրջանակի կարևորությունը,

գ) ներքին շուկան և էլեկտրամատակարարման անվտանգության գծով միջսահմանային համագործակցության հնարավորությունները,

դ) ցանցի աշխատանքը ապահովելու նպատակով փոխադրման և բաշխման ցանցերի կանոնավոր պահպանման և հարկ եղած դեպքում վերանորոգման անհրաժեշտությունը,

ե) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «էլեկտրականության ներքին շուկայում վերականգնվող էներգիայի աղբյուրներից ստացվող էլեկտրականության առաջխաղացման մասին» 2001 թվականի սեպտեմբերի 27-ի 2001/77/ԵՀ հրահանգի և Եվրոպական պառլամենտի և Խորհրդի «էներգիայի ներքին շուկայում օգտակար ջերմության պահանջարկի հիման վրա ջերմային էներգիայի համակցված արտադրության առաջխաղացման մասին» 2004 թվականի փետրվարի 11-ի 2004/8/ԵՀ հրահանգի պատշաճ իրականացումն ապահովելու կարևորությունը:

զ) կայուն գործունեության համար փոխադրման և արտադրման բավարար պահուստային կարողություններն ապահովելու անհրաժեշտությունը, և

է) մեծածախ լիկվիդային շուկաների ստեղծումը խրախուսելու կարևորությունը:

3. 1-ին պարբերությունում նշված միջոցները կիրառելիս, անդամ պետությունները կարող են նաև հաշվի առնել՝

ա) ազգային կամ համապատասխան տարածաշրջանային մակարդակով էլեկտրականության արտադրության բազմազանության աստիճանը,

բ) էլեկտրականության պահանջարկի աճման երկարաժամկետ հետևանքները նվազեցնելու կարևորությունը,

գ) էներգաարդյունավետությունը, նոր տեխնոլոգիաների՝ մասնավորապես պահանջարկը կառավարող տեխնոլոգիաների, վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների և բաշխված արտադրության ընդունումը խրախուսելու կարևորությունը, և

դ) ենթակառուցվածքում և արտադրական կարողությունների ոլորտում ներդրումների իրականացման դեմ առաջացած վարչական արգելապատնեշները հեռացնելու կարևորությունը:

4. Անդամ պետությունները ապահովում են, որ սույն Հրահանգին համապատասխան ընդունված ցանկացած միջոց լինի ոչ խտրական է և անհիմն բեռ չհանդիսանա շուկայի մասնակիցների՝ ներառյալ շուկա մուտք գործողների և փոքր մասնաբաժին ունեցող ընկերությունների համար: Մինչ դրանց ընդունումը, անդամ պետությունները նաև հաշվի են առնում այդ միջոցների ազդեցությունը վերջնական սպառողին էլեկտրականության մատակարարման գնի վրա:

5. Անդամ պետությունների միջև փոխկապակցվածության պատշաճ մակարդակը ապահովելիս 1(1)(գ) հոդվածում նշված կարգով հատուկ ուշադրություն է դարձվում՝

ա) յուրաքանչյուր անդամ պետությանը բնորոշ աշխարհագրական դիրքին,

բ) նոր խողովակաշարերի կառուցման ծախսերի և վերջնական սպառողի շահույթի միջև ողջամիտ հաշվեկշռի պահպանմանը, և

գ) առկա խողովակաշարերի հնարավորինս արդյունավետ օգտագործման ապահովմանը:

Հոդված 4

Գործող ցանցային անվտանգություն

1. ա) Անդամ պետությունները կամ իրավասու մարմինները ապահովում են, որ փոխադրման համակարգի օպերատորները սահմանեն ցանցային անվտանգության նկատմամբ գործող նվազագույն կանոններ և պարտականություններ,

Նմանատիպ կանոններ և պարտականություններ սահմանելուց առաջ նրանք խորհրդակցում են այն երկրների համապատասխան մասնակիցների հետ, որոնց հետ նրանք փոխկապակցված են:

բ) անկախ առաջին պարբերության (ա) կետից, անդամ պետությունները կարող են պահանջել փոխադրման համակարգի օպերատորներից իրավասու մարմին հաստատման ներկայացնել նմանատիպ կանոններ և պարտավորություններ,

գ) Անդամ պետությունները ապահովում են, որ փոխադրման, և համապատասխան դեպքում բաշխման համակարգի օպերատորները գործեն ցանցային անվտանգության նկատմամբ գործող մինիմալ կանոններին և պարտավորություններին համապատասխան,

դ) Անդամ պետությունները պահանջում են փոխադրման համակարգի օպերատորներից պահպանել գործող ցանցային անվտանգության պատշաճ մակարդակը:

Այդ նպատակով փոխադրման համակարգի օպերատորները ցանցային անվտանգության համար պահպանում են գործող տեխնիկական փոխադրման պահուստային կարողությունների պատշաճ մակարդակը և համագործակցում փոխադրման համակարգի օպերատորների հետ իրենց փոխկապակցող հարցի շուրջ:

Այն կանխատեսելի հանգամանքների մակարդակը, որոնց դեպքում անվտանգությունը պետք է պահպանվի, որոշվում է համաձայն գործող ցանցային անվտանգության կանոնների,

ե) Անդամ պետությունները մասնավորապես ապահովում են, որ փոխկապակցված փոխադրման, և համապատասխան դեպքում, բաշխման համակարգի օպերատորները փոխանակեն ցանցային գործունեությանը վերաբերող տեղեկատվությունը ժամանակին և արդյունավետ կերպով՝ գործող նվազագույն պահանջներին համապատասխան: Համապատասխան դեպքերում նույն պահանջները ներկայացվում են նաև այն փոխադրման

և բաշխման համակարգի օպերատորներին, որոնք փոխկապակցված են համակարգի օպերատորների հետ Համայնքից դուրս:

2. Անդամ պետությունները կամ իրավասու մարմինները ապահովում են, որ փոխադրման, և համապատասխան դեպքում բաշխման համակարգի օպերատորները սահմանեն մատակարարման որակի և ցանցի անվտանգության ապահովման նպատակներ և ծառայեն դրանց: Այս նպատակները ենթակա են անդամ պետությունների կամ իրավասու մարմինների կողմից հաստատման, որոնք վերահսկում են նաև դրանց իրականացումը: Դրանք պետք է լինեն անկողմնակալ, թափանցիկ ու ոչ խտրական և պետք է հրապարակվեն:

3. 2003/54/ԵՀ հրահանգի 24-րդ հոդվածում և թիվ 1228/2003 կանոնակարգի (ԵՀ) 6-րդ հոդվածում նշված միջոցները կիրառելիս, անդամ պետությունները չպետք է խտրականություն դնեն միջսահմանային պայմանագրերի և ազգային պայմանագրերի միջև:

4. Անդամ պետությունները ապահովում են, որ արտակարգ իրավիճակներում մատակարարման կրճատումը հիմնված լինի փոխադրման համակարգի օպերատորների կողմից անհավասարակշռության վերահսկմանը առնչվող կանխորոշված չափանիշների վրա: Ցանկացած երաշխիքային միջոց պետք է ձեռնարկվի սերտ խորհրդակցելով համապատասխան փոխադրման համակարգի այլ օպերատորների հետ, համաձայն երկկողմ համաձայնագրերի, այդ թվում՝ տեղեկատվության փոխանակման մասին համաձայնագրերի:

Հոդված 5

Մատակարարման և պահանջարկի միջև հաշվեկշռի պահպանումը

1. Անդամ պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում էլեկտրականության պահանջարկի և արտադրական կարողությունների առկայության միջև հաշվեկշիռը պահպանելու համար:

Անդամ պետությունները մասնավորապես պետք է՝

ա) չհակասելով փոքր մեկուսացված համակարգերի կոնկրետ պահանջներին, խրախուսել մեծածախ շուկայի ստեղծմանը, որը սահմանում է արտադրության և սպառման համար հարմար գներ:

բ) պահանջել փոխադրող համակարգի օպերատորներից ապահովել, որ հավասարակշռմանը վերաբերող նպատակների և/կամ համարժեք շուկայական միջոցների ընդունման համար առկա է արտադրության պահուստային կարողությունների պատշաճ մակարդակ:

2. Չհակասելով Համաձայնագրի 87-րդ և 88-րդ հոդվածներին, անդամ պետությունները կարող են ձեռնարկել նաև հավելյալ միջոցներ, որոնք ներառում բայց չեն սահմանափակում հետևյալը՝

ա) արտադրության նոր կարողությունները և արտադրող նոր ընկերությունների մուտքը դեպի շուկա հեշտացնող դրույթները,

բ) դադարեցվող պայմանագրերի կիրառումը կանխող խոչընդոտների վերացումը,

գ) և արտադրողների և սպառողների համար տարբեր ժամկետներով պայմանագրերի կնքումը կանխող խոչընդոտների վերացումը,

դ) առաջատար չափման համակարգերի նման իրական պահանջները կառավարող տեխնոլոգիաների ընդունման խրախուսումը,

ե) էներգիայի տնտեսման գծով միջոցների խրախուսումը,

զ) մրցութային ընթացակարգերը կամ ցանկացած ընթացակարգ, որի պայմանները համարժեք են 2003/54/ԵՀ հրահանգի 7(1)-րդ հոդվածի թափանցիկ և ոչ խտրական պայմաններին:

3. Անդամ պետությունները հրապարակում են այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն սույն հոդվածի համաձայն և ապահովում են դրանց հնարավորինս լայն կերպով տարածումը:

Հոդված 6

Ցանցային ներդրում

1. Անդամ պետությունները ստեղծում են կարգավորիչ շրջանակ, որը՝

ա) և փոխադրման և բաշխման ցանցային համակարգի օպերատորներին տրամադրում է ներդրումներ շուկայի կանխատեսելի պահանջարկին հասնելու նպատակով նրանց ցանցերը բարելավելու համար, և

բ) դյուրացնում է նրանց ցանցերի պահպանումը և անհրաժեշտության դեպքում դրանց վերանորոգումը:

2. Չհակասելով թիվ 1228/2003 (ԵՀ) կանոնակարգին՝ անդամ պետությունները կարող են թույլ տալ առևտրային ներդրումներ կատարել միջհամակարգային փոխկապակցվածության ստեղծման ոլորտում:

Անդամ պետությունները ապահովում են, որ միջհամակարգային փոխկապակցվածության ստեղծման ոլորտում ներդրումներ կատարելու մասին որոշումները կայացվեն համապատասխան փոխադրման համակարգի օպերատորների միջև սերտ համագործակցության շրջանակներում:

Հոդված 7

Հաշվետվություններ ներկայացնելը

1. Անդամ պետությունները ապահովում են, որ 2003/54/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածում նշված հաշվետվությունը ապահովի էլեկտրական համակարգի ընդհանուր համապատասխանությունը առկա կամ նախատեսված էլեկտրամատակարարման պահանջարկին, որը ներառում է՝

ա) գործող ցանցային անվտանգություն,

բ) հաջորդ հինգ տարի ժամկետում մատակարարման և պահանջարկի կանխատեսվող հաշվեկշիռը

գ) հաշվետվության ներկայացման պահից հինգից 15 տարիների ընթացքում էլեկտրամատակարարման անվտանգությունն ապահովելու համար հեռանկարները, և

դ) հաջորդ հինգ կամ ավել օրացուցային տարիների համար փոխադրման համակարգի օպերատորների և նրանց կողմից հայտնի ցանկացած այլ մարմնի՝ միջսահմանային փոխկապակցվածության կարողությունների դրույթին առնչվող ներդրումային մտադրությունները:

2. Անդամ պետությունները կամ իրավասու մարմինները պատրաստում են հաշվետվությունը սերտ համագործակցելով փոխադրող համակարգի օպերատորների հետ: Համապատասխան դեպքերում փոխադրման համակարգի օպերատորները խորհրդակցում են հարակից փոխադրող համակարգի օպերատորների հետ:

3. հաշվետվության այն մասի համար, որը վերաբերում է 1(դ) պարբերությունում նշված միջհամակարգային փոխկապակցվածության ներդրումային նպատակներին, հաշվի են առնվում՝

ա) թիվ 1228/2003 կանոնակարգով սահմանված գերբեռնվածության կառավարման սկզբունքները,

բ) առկա և նախատեսված էլեկտրահաղորդման գծերը:

գ) պահանջարկի կառավարման միջոցների վրա հիմնված՝ արտադրության, մատակարարման, միջսահմանային փոխանակումների և սպառման ենթադրվող սխեմաները, և

դ) տարածաշրջանային, ազգային և եվրոպական կայուն զարգացման նկատառումները, ներառյալ այն նախագծերը, որոնք կազմում են թիվ 1229/2003/ԵՀ որոշման I-ին հավելվածում ներկայացված առաջնային նախագծերի առանցքի մասը:

Անդամ պետությունները ապահովում են, որ փոխադրող համակարգի օպերատորները տրամադրեն տեղեկատվություն նրանց կամ նրանց հայտնի ցանկացած այլ անդամի կողմից միջսահմանային փոխկապակցվածության կարողությունների դրույթներին առնչվող ներդրումային մտադրությունների մասին:

Անդամ պետությունները կարող են նաև պահանջել փոխադրման համակարգի օպերատորներից տեղեկատվություն տրամադրել ներքին խողովակաշարերի ստեղծմանն առնչվող ներդրումների մասին, որը նյութապես ազդում է միջսահմանային միջհամակարգային կապի դրույթին:

4. Անդամ պետությունները կամ իրավասու մարմինները ապահովում են, որ փոխադրման համակարգի օպերատորների և/կամ իրավասու մարմինների համար հեշտացվեն համապատասխան տվյալներից օգտվելու համար անհրաժեշտ միջոցները, երբ դրանք անհրաժեշտ են այս գործառույթների իրականացման համար:

Գաղտնի տեղեկատվության չիրապարակումը պետք է ապահովվի:

5. 1(դ) պարբերությունում նշված իրավասու մարմնի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա, Հանձնաժողովը ծրագրված ներդրումների և դրանց միջոցով 1(1) հոդվածում նշված նպատակները խթանելու մասին զեկուցում է անդամ պետություններին, իրավասու մարմիններին և Հանձնաժողովի 2003/796/ԵՀ որոշմամբ [8] հիմնադրված էլեկտրաէներգիայի և գազի մասով կարգավորողների եվրոպական խմբին:

Այս հաշվետվությունը կարող է համակցված լինել 2003/54/ԵՀ հրահանգի 28(1) հոդվածի (գ) կետով նախատեսված հաշվետվության հետ:

Հոդված 8

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը պետք է գործողության մեջ դնեն մինչև 2008 թվականի փետրվարի 24-ը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այս ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ պետք է ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները մինչև 2007 թվականի դեկտեմբերի 1-ը Հանձնաժողովին ներկայացնում են ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 9

Հաշվետվություններ ներկայացնելը

Հանձնաժողովը վերահսկում և ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառման ընթացքը և մինչև 2010 թվականի փետրվարի 24-ը Եվրոպական պառլամենտին ու Խորհրդին է ներկայացնում ընթացիկ հաշվետվություն:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 11

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում, 2006 թվականի հունվարի 18-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

Նախագահ

Ժ. Բորել Ֆոնտելես

Խորհրդի կողմից

Նախագահ

Հ. Ուինկլեր

[1] ՊՏ թիվ C 120, 20.05.2005թ., էջ 119:

2] Եվրոպական պառլամենտի 2005թ. հուլիսի 5-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2005թ. դեկտեմբերի 1-ի որոշում:

3) ՊՏ L 176, 15.07.2003թ., էջ 37: Խորհրդի 2004/85/ԵՀ հրահանգով (ՊՏ L 236, 07.07.2004թ., էջ 10) վերջին անգամ փոփոխված հրահանգ:

4] ՊՏ թիվ L 176, 15.07.2003թ., էջ 11:

5) ՊՏ L 176, 15.07.2003թ., էջ 1: Վերջին անգամ թիվ 1223/2004 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 233, 02.07.2004թ., էջ 3):

6] ՊՏ թիվ L 283, 27.10.2001թ., էջ 33:2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված Հրահանգ:

7] ՊՏ թիվ L 52, 21.02.2004թ., էջ 50:

8] ՊՏ թիվ L 296, 14.11.2003թ., էջ 34: